Պատմություն և մշակույթ 2025 № 22 [1]
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.132

The Issue of Nagorno-Karabakh in 1921–1923: Distortions in Azerbaijani Historiography

Armine Khachatryan
https://orcid.org/0009-0008-7031-428X
YSU, Candidate of Historical Sciences, Associate Professor
khachatryan.armine@ysu.am

Keywords: Nagorno Karabakh, solution, autonomy, region, discontent, Soviet Azerbaijan, historiography, issue.

This article examines the issue of Nagorno-Karabakh—the contradictions that arose around this matter in the period from July 5, 1921, when the decision was made to include the territory within Azerbaijan, to July 7, 1923, when the decision was made to grant autonomy and establish the Nagorno-Karabakh Autonomous Region [NKAR], as well as the efforts aimed at overcoming these contradictions. The essence of the researched problem lies in the fact that, in the historical and political literature, the situation that emerged after the decision to include Nagorno-Karabakh within Azerbaijan has not been thoroughly studied. In many cases, this issue is approached in a one-sided and biased manner. Meanwhile, the entire course of events related to one of the most acute conflicts of the 20th century—the Nagorno-Karabakh issue—demonstrates that the real consequences of the decisions made and attitudes toward the conflict require further clarification, and one-sided interpretations are unacceptable. At the same time, the reaction of the direct stakeholders—the Armenian population of Nagorno-Karabakh—has not received due attention. There are numerous studies on this issue in both Armenian and Azerbaijani historiographies. However, it should be emphasized that there are significant gaps, particularly in the form of extremely opposing positions on the problem. Our goal is to uncover the actual course of events and, ultimately, examine the issue in terms of how well it reflected the free will of the national majority and to what extent it was acceptable and just.

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1921-1923թթ.: Ադրբեջանական պատմագիտության խեղաթյուրումները

Արմինե Խաչատրյան
ԵՊՀ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

History and Culture Vol.-22[1], 2025, pp. 132-150

Received: 15.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 19.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author[s] 2025

Հիմնաբառեր՝ որոշում, Լեռնային Ղարաբաղ, կազմ, ինքնավարություն, մարզ, դժգոհություն, Խորհրդային Ադրբեջան, պատմագիտություն, հիմնախնդիր, բացթողում։

Սույն հոդվածում քննության է դրված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ 1921թ. հուլիսի 5-ի Ադրբեջանի կազմ ընդգրկելու մասին որոշումից մինչև 1923թ. հուլիսի 7-ի՝ ինքնավարության շնորհման և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) ձևավորման մասին որոշումն ընկած ժամանակահատվածում հիմնախնդրի շուրջ ծագած հակասությունները, դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերը։ Խնդրի էությունը կայանում է նրանում, որ պատմաքաղաքագիտական գրականության մեջ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ներառելու մասին որոշումից հետո ստեղծված իրավիճակը ոչ լիարժեք է քննության առնված, և բազմաթիվ դեպքերում առկա է խնդրի նկամամբ միակողմանի, կանխակալ վերաբերմունք, մինչդեռ 20-րդ դարի ամենաստր հակամարտություններից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, դրա շուրջ ստեղծված զարգացումների ողջ ընթացքը, ցույց է տալիս, որ հակամարտության հետ կապված որոշումների թողած իրական հետևանքներն ու վերաբերմունքը նորովի պարզաբանման կարիք ունեն և նրանում անթույլատրելի են միակողմանի անդրադարձներն, առանց համապարփակ դիտարկման, առավել ևս, որ որոշման արդյունքների անմիջական կրողների՝ Լեռնային Ղարաբաղի հայության հակազդեցությունը պատշաճ ուշադրության չէր արժանացել։ Քննության դրված խնդրի վերաբերյալ առկա են մի շարք ուսումնասիրություններ, թե հայ, թե ադրբեջանական պատմագիտության մեջ, սակայն հարկ է ընդգծել, որ կան իրական բացթողումներ, մասնավորապես առկա է խնդրի նկատմամբ միմյանցից խիստ հակադիր դիրքորոշումներ։ Մեր նպատակն է վեր հանել դեպքերի իրական ընթացքը, ի վերջո դիտարկել հարցը՝ թե որքանով էր այն արտացոլում ազգային մեծամասնության՝ արցախահայության ազատ կամարտահայտումը, որքանով էր ընդունելի և արդարացի։

Проблема Нагорного Карабаха в 1921–1923 гг.: Искажения в азербайджанской историографии

Армине Хачатрян
ЕГУ, кандидат исторических наук, доцент

Ключевые слова: Решение, Нагорный Карабах, автономия, область, недовольство, Советский Азербайджан, историография, проблема.

В данной статье рассматривается проблема Нагорного Карабаха — противоречия, возникшие вокруг этого вопроса в период с 5 июля 1921 года, когда было принято решение о включении территории в состав Азербайджана, до 7 июля 1923 года, когда было принято решение о предоставлении автономии и образовании Нагорно-Карабахской автономной области (НКАО), а также усилия, направленные на преодоление этих противоречий. Суть исследуемой проблемы

заключается в том, что в историко-политологической литературе ситуация, сложившаяся после решения о включении Нагорного Карабаха в состав Азербайджана, не была полноценно изучена. Во многих случаях к данной проблеме проявляется односторонний и предвзятый подход. Между тем весь ход развития событий, связанных с одним из самых острых конфликтов XX века — проблемой Нагорного Карабаха, показывает, что реальные последствия принятых решений и отношение к конфликту требуют новых разъяснений, а односторонние интерпретации недопустимы. При этом реакция непосредственных носителей проблемы — армянского населения Нагорного Карабаха — не получала должного внимания. По рассматриваемому вопросу существуют многочисленные исследования как в армянской, так и в азербайджанской историографии. Однако следует подчеркнуть, что имеются значительные пробелы, в частности, наблюдаются крайне противоположные позиции по данной проблеме. Наша цель — выявить реальный ход событий, а в конечном итоге рассмотреть вопрос с точки зрения того, насколько он отражал свободное волеизъявление национального большинства, насколько был приемлемым и справедливым.

* * *

Ներածություն: 1921թ. հուլիսի 5-ի Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան բյուրոյի (ՌԿ(բ)Կ Կովբյուրո) որոշմամբ Լեռնային Ղարաբաղը մտցվեց Ադրբեջանական ԽՍՀ կազմ: 1918-1920թթ. հայ-ադրբեջանական երկարատև հակամարտության, Լեռնային Ղարաբաղի հայության մղած պայքարի, բազմաթիվ քննարկումների բովով անցած, տարածաշրջանային շահերի բախման կիզակետում հայտնված ազգային այս հիմնախնդիրը ի դեմս Լեռնային Ղարաբաղի, ի վերջո լուծվեց հօգուտ Ադրբեջանի: Արդյունքում, շուրջ 90 տոկոս հայ բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղն ընդգրկվեց Ադրբեջանի կազմ, անտեսվեց արցախահայության միահամուռ կամքը՝ միանալու Հայաստանի Հանրապետությանը: Որքանով էր որոշումն արդարացի և ինչ հիմքերով կայացվեց նման որոշում և ինչպիսի հետևանքներ այն թողեց, ինչպես անդրադարձավ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը, իրավիճակի կայունացմանը, կփորձենք ցույց տալ սույն ուսումնասիրության մեջ: Ադրբեջանական պատմագիտության մեջ իշխող տեսակետների համաձայն, արցախահայությունը դեմ չէր այս որոշմանը, մինչդեռ փաստերի իրական վերլուծությունը ցույց է տալիս, որ արցախահայությունը պայքար է մղել 1921թ. հուլիսի 5-ի որոշումն չեղարկելու համար: 1921թ. հուլիսի 5-ի՝ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ընդգրկելու մասին որոշումը բացասական արձագանք գտավ հայության շրջանում: Ընդամենը մեկ օր առաջ՝ 1921թ. հուլիսի 4-ին նույն Կովբյուրոյի որոշումն հակառակն էր՝ Լեռնային Ղարաբաղը պետք է միացվեր Հայաստանի Հանրապետությանը: Հաջորդ օրը, հրավիրվեց Կովբուրոյի արտահերթ նիստ, հարցն առանց քվեարկության դնելու, որոշվեց Լեռնային Ղարաբաղն ընդգրկել Ադրբեջանի կազմ: Որոշման առաջին կետում ասված էր. «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադր. ԽՍՀ սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն

ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքավար մարզի կազմի մեջ:» [Нагорный Карабах 1918-1923 гг., Сборник документов и материалов, 1992, 650]:

1921թ. հուլիսի 5-ի որոշման արձագանքները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շրջանում: 1921թ. հուլիսի 5-ի անօրինական որոշումից օրեր անց, հայկական կողմը պաշտոնապես արտահայտեց իր կարծիքը և անհամաձայնությունը որոշման վերաբերյալ: Այդ անհամաձայնությունն իր արտացոլումը գտավ 1921թ. հուլիսի 16-ի Հայաստանի կոմունիստական [բոլշևիկյան] կուսակցության [ՀԿ[բ]Կ] Կենտրոնական Կոմիտեի (ԿԿ) նիստի արձանագրության մեջ, որտեղ ասված էր. «Լսեցին Կովբյուրոյի որոշումը Ղարաբաղի մասին. որոշեցին՝ ա)Հարցը չի տեղափոխվում Կովբյուրոյի կրկնակի քննարկմանը, բ) Ղարաբաղի հարցի որոշումը մեզ չի բավարարում», գ] իսկ հաջորդ նիստում ինքնավարության բովանդակության վերաբերյալ բերել կոնկրետ և ձևավորված առաջարկություն [Нагорный Карабах в международном праве и мировой политике, 1998, 640]: 1921թ. հուլիսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի Բյուրոն հրապարակեց որոշում, որտեղ 1921թ. հուլիսի 5-ի՝ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմ ընդգրկելու մասին որոշումն որակեց որպես հիմքից սխալ: [Հարությունյան, 1996, 293]: Հայաստանի Կոմկուսի առաջին համագումարը, որը կայացավ 1922թ. հունվարին, անօրինական որակեց 1921թ. հուլիսի 5-ի որոշումը: Ուշադրության է արժանի այն ժամանակվա ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ալ. Մյասնիկյանի խոսքը. Այն հարցին, թե ինչու Լեռնային Ղարաբաղը չի միացվել Հայաստանին, Մյասնիկյանը պատասխանել է, թե Կովկասյան բյուրոյի պլենումի վերջին նիստը հիշեցնում էր Անդրկովկասի նախկին պետությունների ղեկավարների պայքարը: Ադրբեջանն ասում էր. «Եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նրան նավթ չենք տա»: [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 660]: Մյասնիկյանի այս արտահայտությունը ցույց է տալիս Ադրբեջանի իշխանությունների բռնած դիրքորոշումը՝ հենված սպառնալիքների վրա: Այժմ դիտարկենք այն հարցը, թե ինչպես է Լեռնային Ղարաբաղի հայությունը ընդունել 1921թ. հուլիսի 5-ի որոշումը: Հարցն անշուշտ կարևոր է, քանի որ ներկայումս ադրբեջանական պատմագիտության մեջ տիրապետող տեսակետի համաձայն, Լեռնային Ղարաբաղի հայությունը դեմ չի եղել Ադրբեջանի կազմ ընդգրկվելուն, նույնիսկ կարծիքներ են առաջ քաշվել, թե իբր արցախահայությունը դեմ էր նույնիսկ խոստացված ինքնավարությանը: Այսպես, Ջ. Գուլիեվը գրում է. «Լեռնային Ղարաբաղի աշխատավորները, չնայած դաշնակների և մուսավաթականների սադրիչ գործողություններին, վճռականորեն հանդես են եկել ոչ ամբողջականության դեմ, իրենց երկրամասը Ադրբեջանի հետ մեկ ամբողջություն տեսնելու պահպանմամբ»: Ասածը հիմնավորելու համար Ջ. Գուլիեվը վկայակոչում է Ա. Ի. Միկոյանի՝ Լենինին 1919թ. մայիսի 22-ին գրած մի զեկույցը, որտեղ ասված էր. «Հայ աշխատավորությունը իր 5-րդ համագումարում որոշել է ճանաչել և մտնել Սովետական Ադրբեջանի կազմ, այնուհետև գրում է, թե ղարաբաղյան կոմունիստները միշտ էլ հանդես են եկել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից չանջատելու դիրքերում: Նրանք դեռ 1919թ. օգոստոսյան խորհրդակցության ժամանակ են հատուկ որոշում կայացրել» [Конфликт в Нагорном Карабахе, сборник статей, 1990, 12]: Նախ ասենք, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը երկու տարի շարունակ, 1918-1920թթ. անընդմեջ պայքար է մղել ու չի ընդունել ադրբեջանական գերիշխանությունը: Փաստենք, որ նախ 1919թ. Ադրբեջանը դեռևս խորհրդայնացված չէր, երկրորդ, 5-րդ համագումարն այդպիսի

որոշում չէր կայացրել: [Азербайджанская аргументация и ее опровержение, 1989, 27]: Լեռնային Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը հրավիրվել էր 1919թ. ապրիլի 23-29-ը: 5-րդ համագումարում, Անդրկովկասում գերիշխանության ձգտող անգլիական հրամանատարությունն էր ձգտում համագումարին փաթաթել մի որոշում, որով հայությունը իրեն կճանաչեր Ադրբեջանի կազմում: Համագումարին մասնակցում էր նաև անգլիացիների հրամանատար Շատելվորտը: Վերջինս կտրուկ հայտարարում է, որ անգլիական հրամանատարության որոշմամբ Ղարաբաղը պետք է ճանաչի Ադրբեջանի իշխանությունը, ենթարկվի նրան, մինչև որ Ադրբեջանի և Հայաստանի սահմանները ճշգրտվեն հետագայում: [Աբրահամյան, 2003, 130]: Ինչպես նկատում ենք խոսքը Ադրբեջանի իշխանությունը ժամանակավոր ընդունելու մասին էր, մինչև երկու պետությունների միջև սահմանների վերջնական ճշգրտումը, այդուհանդերձ համագումարի պատգամավորները չընդունեցին նման թեկուզև ժամանակավոր որոշում: Ինչ վերաբերում է Ջ. Գուլիեվի կողմից հիշատակած 7-րդ համագումարի որոշմանը, ապա այդ համագումարում որոշվեց ընդունել Ադրբեջանի ժամանակավոր իշխանությունը, մինչև Փարիզի վեհաժողովում հարցի վերջնական կարգավորումը: Հատկանշական է 1920թ. ապրիլի 25-ին Վարանդայում հրավիրված արցախահայության իններորդ համագումարի որոշումը, որտեղ ասված էր. 1.«Չեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի անունից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը՝ ելնելով այն բանից, որ այն խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպված հարձակմամբ: 2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը որպես նրա անբաժան մաս: 3. Խնդրել Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը Մոսկվայում՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը»: [ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ.581, թ. 98]:

1921թ. հուլիսի 5-ի որոշումից համընդհանուր դժգոհության փաստերից մեկն էլ արտահայտվեց 1921թ. օգոստոսի 1-ին, երբ տեղի ունեցավ Շուշիի գավառի երկրորդ տեղամասի խորհուրդների արտահերթ նստաշրջանը, որտեղ ի թիվս այլ հարցերի, քննարկվեց նաև ղարաբաղյան հարցը: Ըստ նստաշրջանի արձանագրության, Լևոն Միրզոյանը, ով նշանակվել էր Ադրբեջանի կողմից որպես երկրորդ լիազոր Լեռնային Ղարաբաղում [առաջին լիազորը Ալ. Կարաեվն էր], հայտարարում է, որ հարցը չի դրվում հրապարակային քննարկման, այլ գյուղացիության կարծիքն իմանալու նպատակ է հետապնդում: Ըստ արձանագրության, Լ. Միրզոյանը, ով զբաղեցնում էր Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը, փորձում էր նստաշրջանին ապացուցել, որ տնտեսական, հոգևոր, քաղաքական և ազգային տեսանկյունից, Ղարաբաղը սերտորեն կապված է Ադրբեջանի կենտրոնի՝ Բաքվի հետ: «Այս գործոններն արդեն իսկ կանխորոշում են հարցը, թե որ քաղաքական կողմում մենք պետք է Ղարաբաղը դիտարկենք»: [ԼՂԻՄ մարզային պետական արխիվ, Ֆոնդ 485, ցանկ 1, գլուխ 14, թերթ 66-68]:

Փաստորեն ինչպես ակնհայտ էր, Լ. Միրզոյանի նպատակն էր Ղարաբաղում գործադրել ադրբեջանական իշխանությունների և խորհրդային իշխանության կամքը՝ վերջնական տեսքի

բերել Ղարաբաղն Ադրբեջանի կազմ մտցնելու գործընթացը, Հայաստանից այն անջատումը, այսինքն 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշման վերջնական գործադրումը։ Լ. Միրզոյանը փորձում էր նստաշրջանի մասնակիցների առջև առաջ տանել խորհրդադրբեջանական համաձայնեցված թեզը՝ այն է ելնելով տնտեսական նկատառումներից Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկված լինելը արդարացված համարելով։ Հատկանշական է նաև այն փաստը, որ Լ. Միրզոյանը իր ելույթում չէր բացառում ազգային թշնամանքի հնարավորությունը Լեռնային Ղարաբաղի բնակչության նկատմամբ, սակայն նշում էր, որ դա կարող է լինել որպես մի անցողիկ երևույթ։ [ԼՂԻՄ մարզային պետական արխիվ, Ֆոնդ 485, ցանկ 1, գլուխ 14, թերթ 66-68]։ Փաստորեն Լ. Միրզոյանի խոսքերից պարզ երևում է, որ ազգային թշնամանքը կողմերի միջև չի բացառվում, սակայն այն համարում էր վերջինս անցողիկ երևույթ։ Այսպիսով, բացահայտ էր այն փաստը, որ գոյություն ուներ հայ բնակչության անհամաձայնություն և դժգոհաբար արձագանքումը հուլիսի 5-ի որոշման նկատմամբ։ Հուլիսի 5-ի որոշման ընդունումը պայմանավորված էր իբրև թե հայերի և մուսուլմանների միջև ազգային համերաշխություն հաստատելու անհրաժեշտությունից ելնելով, սակայն ինչպես ցույց են տալիս փաստերը, նման որոշումը չի ապահովել այդ համերաշխությունը, ընդհակառակ տեղի է տվել նոր թշնամանքի և հակասությունների։ Նույն նստաշրջանում Լ. Միրզոյանը ազգային թշնամանքի չեզոքացման, Լեռնային Ղարաբաղի բնակչության մշակութային զարգացման կարևոր քայլ է դիտարկում Ղարաբաղի լեռնային մասում հատուկ վարչական ինքնավար միավորի ստեղծումը, այսինքն Ադրբեջանին անցած Լեռնային Ղարաբաղին ինքնավարության շնորհումը։ Այժմ, կրկին անդրադառնանք 1921թ. օգոստոսի 1-ին հրավիրված Շուշիի երկրորդ տեղամասի խորհուրդների արտահերթ նստաշրջանին։ Ինչպես պարզ երևում է նստաշրջանի արձանագրությունից, այն ղեկավարող ուժերը՝ Լ. Միրզոյանը և Ա. Կարաեվը փորձել են մասնակիցների մոտ արդարացնել 1921թ. հուլիսի 5-ի որոշումը և զարգացնել, առարկայական դարձնել Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար միավոր ճանաչելու սկզբունքը, համարելով այն միակ ճիշտ և ընդունելի տարբերակը։ Սակայն հատկանշական է այն փաստը, որ նստաշրջանի մասնակիցները դրական չեն արձագանքել, ինչը փաստում է, որ նրանք դժգոհ են եղել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկելու որոշումից ընդհանրապես։ Արձանագրությունից երևում է, որ նստաշրջանի պատվիրակները հայտարարել են, իրենք չեն կարող արտահայտվել այդ հարցի կապակցությամբ բնակչության անունից [խոսքը Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար միավոր հռչակելն էր՝ Ադրբեջանի կազմում-մեկնաբանությունը իմն՝ Ա.Բ. Խաչատրյան] և առաջարկում էին տալ հնարավորություն գյուղերում հարցի քննարկման համար։ «Պետրոսյան ազգանունով պատվիրակը հայտարարեց, որ ուղղակի պատվիրակներից ոչ մեկը չի ուզում արտահայտվել, չնայած բոլորին հայտնի էր գյուղացիության ցանկությունը՝ այն է լինել Խորհրդային Հայաստանի հետ միավորված»։ [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 652.]։ Նույն արձանագրության մեջ նշված էր. «Լեռնային Ղարաբաղի բնակչության կյանքի ոչ նորմալ պայմանների և հատուկ վերաբերմունքի մասին»։ Այսպիսով, միանշանակ է, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը դեմ էր որևէ կարգավիճակով թեկուզ, Ադրբեջանի կազմի մեջ մտնելուն։ Այդ են փաստում, 1918-1920թթ. կայացած արցախահայության համագումարները, որոնցում հստակ արձանագրված էր, որ Լեռնային Ղարաբաղը պետք է միավորվի Հայաստանի հետ։ 1921թ. հուլիսի 5-ի որոշումը չէր

բխում արցախահայության կամքից: Ասվածի վկայություններից է նաև 1921թ. հունիսի 28-ին Խանքենդի[Ստեփանակերտ] ավանում հրավիրված Շուշիի գավառի 1-ին տեղամասի գործադիր կոմիտեների աշխատողների հավաքում բարձրացված դժգոհությունը: Նստաշրջանի օրակարգում դրված էր հացահատիկի բերքահավաքի հարցը: Նիստին ներկա էին շուրջ 60 հոգի: Նիստը հրավիրվել էր Բաքվի կողմից Լեռնային Ղարաբաղի լիազոր նշանակված Ա. Կարաեվի և Լ. Միրզոյանի կողմից: Քննարկման դրված հացահատիկի հարցը սակայն մղվեց երկրորդական պլան: Օրակարգային առաջին հարցը դարձավ Լեռնային Ղարաբաղի հարցը: Ընկեր Կարաեվը ներկաներին սկսեց բացատրել, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսապես կախված է Դաշտային Ղարաբաղից և առաջարկեց հավաքվածներին կարծիքներ հայտնել Ադրբեջանի խնամակալության ներքո ինքնավար Ղարաբաղ ստեղծելու իբրև թե արդեն իսկ որոշված հարցի մասին: Ըստ պահպանված արձանագրության, հավաքվածներն ասել էին, որ իրենք հավաքվել են ոչ այդ հարցը քննարկելու համար, իսկ իրենց շրջանի բնակչության կարծիքն արտահայտելու համար, իրենք լիազորված չեն: Արձանագրության մեջ ասված էր, որ ընկեր Միրզոյանը ավելի թեժ սկսեց պաշտպանել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ինքնավար միավոր հռչակելու թեզը և «ավելի ուժեղ սկսեց ստիպել, որ ընդունվի նման գրավոր որոշում հարցի վերաբերյալ հօգուտ Ադրբեջանի: Բայց նրանց ջանքերը հանդիպեցին սառը դիմադրության հավաքվածների կողմից»: [Нагорный Карабах в международном праве и мировой политике, 1998, 641]: Ի վերջո, չկարողանալով հասնել մի փաստաթղթի ստորագրման, որով արտահայտված կլիներ հայ աշխատավորների ցանկությունը՝ ինքնավար իրավունքով մտնելու Ադրբեջանի կազմի մեջ, կազմվեց մի փաստաթուղթ, որտեղ արտահայտված էր այն մտահոգությունը, որ «վիճակը ճգնաժամային է, խնդրում ենք միջոցներ ձեռարկել Խորհրդային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու համար»: [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 654]: Այս ամենը ակնհայտ կերպով ցույց է տալիս, որ հայ հասարակությունն ընդհանրապես դեմ էր Ադրբեջանի կազմում ընդգրկվելուն: Ադրբեջանցի պատմաբան Ի. Նիֆտալիեվը նույպես փորձում է ցույց տալ, թե իբր հայ հասարակությունն ընդհանրապես կողմ էր Ադրբեջանի կազմում ընդգրկվելուն, սակայն իր աշխատությունում կան ակնհայտ հակասություններ: Նիֆտալիեվը գրում է. «Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու որոշումը դարձավ նոր անջատողական ալիքի, տրամադրությունների բարձրացման աղբյուր»: [Нифталиев, 2010, 119]: Վերջինս որպես ասվածի վկայություն բերում է 1921թ. հոկտեմբերի 19-ին Շուշիի գավառի 2-րդ տեղամասի ոչ կուսակցական գյուղացիական համագումարը: Համագումարում ելույթ ունեցող հայ պատվիրակները կարծես թե նախօրոք կազմված սցենարով, նշում է Նիֆտալիեվը, դեմ արտահայտվեցին Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղն ընդգրկելուն: Ելույթ ունեցողների հիմնական փաստարկները հետևյալն էին. ա] հայերի բարձր մակարդակը ադրբեջանցիների նկատմամբ, բ] ադրբեջանցի կոմունիստներին ազգայնականության մեջ մեղադրելը: Վերջիններս առաջարկում էին Ղարաբաղը միացնել կամ Հայաստանին, կամ նույնիսկ Ռուսաստանին: Ըստ Նիֆտալիեվի, Ա. Կարաեվի ելույթը, ավելի հստակ բացեց հարցի իրական պատճառները: Ըստ Կարաեվի, եթե Ղարաբաղում հանգիստ լիներ, ապա ընդհանրապես չէր ծագի ղարաբաղյան հարցը: Նա իրավիճակի մեղմացման

համար, առաջ քաշեց մի քանի հարցեր՝ 1. հողային, 2. բանդիտիզմի դեմ պայքար: Փաստորեն, ի հակակշիռ Նիֆտալիեվի տեսակետի, կարելի է փաստել, որ 1. Լեռնային Ղարաբաղի հայ հասարակության մեջ աճում էր դժգոհությունը Ադրբեջանի իշխանությունից, հայ հասարակությունը իրեն շարունակում էր չտեսնել Ադրբեջանի կազմում, 2. շարունակվում էին հայ-ադրբեջանական ընդհարումները, որոնք Կարաեվի կողմից որակվում էին որպես բանդիտիզմ: Այդ նույ ոգով էր գրված նաև 1921թ. օգոստոսի 8-ին Խորհրդային Ադրբեջանի Ժողկոմխորհի ներկայացուցիչ Լ. Միրզոյանի նամակը ուղղված Ադրկոմկուսի կենտկոմին, որում ասված էր. Լեռնային Ղարաբաղում իրադրության կայունացման, շտկման համար, անհրաժեշտ է մի քանի կոնկրետ քայլերի իրականացում, այդ թվում Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր, որը կենթարկվեր Կենտրոնին՝ Ժողկոմխորհին և Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեին, իսկ կուսակցական առումով՝ Ադրկոմկուսի Կենտկոմին: [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 659]:

Պայքար ինքնավարության համար: Տեսակետների նոր բախումներ: Փաստորեն, 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ նշված էր, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին պետք է շնորհեր ինքնավարություն: Սակայն, ինչպես նկատում ենք, ադրբեջանական կողմը ձգձգում էր ինքնավարության շնորհման գործընթացը: Լ. Միրզոյանը, որը նշանակված էր ադրբեջանական իշխանությունների կողմից, ջանքեր էր գործադրում՝ օր առաջ իրականություն դարձնելու Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար միավոր առանձնացումը: Դրա պատճառը հայ հասարակության մեջ ծայր առած դժգոհության ալիքն էր, կապված Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկելու որոշման հետ, մյուս կողմից էլ ինքնավարությունն այն նվազագույնն էր, որ կարող էր ինչ որ չափով փոխհատուցել հայության ազատ կամարտահայտության չիրացումը: Ադրբեջանցի պատմաբան Ի. Նիֆտալիեվը գրում է, որ Լ. Միրզոյանը իր զեկույցում փորձում էր ապացուցել, որ ազգային հարցի լուծման միակ տարբերակն այստեղ ինքնավարությունն էր: Ադրբեջանցի պատմաբանի քննադատությունը Միրզոյանի հասցեին բխում էր նրանից, որ վերջինս օր առաջ փորձում էր իրականություն դարձնել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը: Ըստ Նիֆտալիեվի, Լ. Միրզոյանի հիմնավորումներն հօգուտ ինքնավարության, հակասում էին միմյանց: Բանն այն է, որ Միզոյանը իր ելույթում նշում էր հայ աշխատավորների և մտավորականների հանդեպ ոչ լավ վերաբերմունքի մասին, մյուս կողմից էլ ղարաբաղյան հարցի ծագումը կապում էր ազգայնականորեն տրամադրված հայ մտավորականների կողմից առաջ քաշված: [Алиев, 1989, 100]: Միաժամանակ, Միրզոյանը իր զեկույցում ադրբեջանցի կոմունիստներին մեղադրում էր նույնպես ազգայնականության մեջ, ովքեր շարունակում էին Ղարաբաղի լեռնային մասը դիտել որպես դաշնակների և թանիստների «բույն»: [Нифталиев, 2010, 118]: Միրզոյանը առաջարկում էր հետ կանչել «ազգայնամոլ» տրամադրված տարրերին և Շուշի ուղարկել մի քանի ռուս աշխատավորների, որպեսզի լիցքաթափվի իրադրությունը: Այսպիսով, Լ. Միրզոյանը կարևոր ներդրում ունեցավ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն շնորհելու գործում: Նրան վերագրվող հակասականությունը տվյալ պահին փոխհաձայնեցում կառուցելու հետևանք էր, Ղարաբաղի հարցում խորհրդային որդեգրած գծի, հակական և ադրբեջանական կողմերի միջև որոշակի հավասարակշռություն ստեղծելու և Լեռնային Ղարաբաղի հայության համար գոնե որոշված ինքնավարությունը որպես նվազագույն կարգավիճակ Ադրբեջանից կորզելու

մտայնության արդյունք էր: Փաստորեն, Լ. Միրզոյանի ելույթից պարզ էր նրա դիրքորոշումը. 1. Լեռնային Ղարաբաղում շարունակվում էին ընդհարումները հայերի և ադրբեջանցիների միջև, 2. հայ աշխատավորության նկատմամբ առկա էր վատ վերաբերմունք, 2. հայ մտավորականությունը Ղարաբաղը չէր տեսնում Ադրբեջանի կազմում, 4. իրավիճակի գոնե ինչ որ չափով մեղմացումը, կայունացումը հնարավոր էր միայն երկրամասը առանձնացնելով որպես անկախ վարչական միավոր: Մեր կարծիքով Միրզոյանն այն քաղաքական գործիչն էր, ով վարում էր խորհրդային պետական քաղաքականության որդեգրած գիծը Ղարաբաղի հարցում, ով ձգտում էր իրականություն դարձնել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը: Ընդհանրապես 1921թ. հուլիսի 5-ի որոշումը առարկայական դարձնելու նպատակով, իշխող կուսակցական վերնախավի ջանքերը հանդիպում էին բազմաթիվ խոչընդոտների: Իշխանական թևը փորձում էր Լեռնային Ղարաբաղի հայությանը հաշտեցնել կատարված փաստի հետ, այն է Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ընդգրկվելու հետ, սակայն ձգձգում էր նախատեսված ինքնավարության շնորհումը և Լեռնային Ղարաբաղի առանձնացումը որպես ինքնավար վարչական միավոր: Այսպես ադրբեջանցի պատմաբան Ջ. Գուլիեվը գրում է. « Այդ հարցը ոչ մեկանգամյա քննարկումների առարկա էր դարձել»: [Гулиев, 1993, 4]:

Լեռնային Ղարաբաղի հայությունը դժգոհ էր որոշումից և տեղի էին ունենում ընդհարումներ: Նրանք անընդհատ բարձրացնում էին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանից անջատելու հարցը: Հայ մտավորականության մի մասն էլ հիասթափված անորոշ իր կացութաձևից, նախընտրում էր արտագաղթը: Այսպես, Բաքվի Կոմունիստ թերթի հաղորդած տեղեկությունների համաձայն մտավորականությունը հիասթափված էր: «Ղարաբաղյան մտավոր ուժի հեռանալը տարածված երևույթ էր: Մտավորականությունը, որը մնում էր երկրամասում, դեռևս հնարավորություն չուներ թողնելու այն, կամ հիասթափված պարփակվում էր իր ամենօրյա հոգսերի մեջ, կամ էլ ոչ լիարժեք ուժերով մտնում է գործունեության մեջ, առանց հավատի և աջակցության…Չպետք է մոռանալ, որ Լեռնային Ղարաբաղը վերջին տասնամյակում կազմել է մեր հայկական մշակույթի ուղիղ կեսը, եթե ոչ ավելին և տվել է հայ ժողովրդին նրա լավագույն մտավոր և բարոյական ուժերը:»: [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 656]: Եւ այսպես 1921-1922թթ. Լեռնային Ղարաբաղում ոչ մի անգամ չի դադարել և գրեթե չի եղել շրջանային և տեղամասային որևէ համագումար, որտեղ չպահանջվեր միավորում մայր Հայաստանի հետ: Ադրբեջանական իշխանություններն իհարկե լավ էին պատկերացնում, թե տվյալ պարագայում ինչ հետևանքներ կարող էր ունենալ ինքնավարության հռչակումը: Գնալով իրավիճակն առավել սրվում էր: Պատահական չէր, որ 1921թ. հոկտեմբերի 19-ին Շուշիի գավառի 2-րդ տեղամասի գյուղացիական համագումարում, ԿԿ ներկայացուցիչ Ա. Կարաեվն ասում էր, որ «Ղարաբաղի հարցը համեմատած մյուս հարցերի հետ չնչին է: Ղարաբաղին անհրաժեշտ է միայն հանգստություն: Եթե Ղարաբաղում հանգստություն լիներ, ղարաբաղյան հարցը չէր էլ ծագի» [[Нифталиев, 2010, 119]: Ասվածն իսկ ապացուցում է, որ 1921թ. հուլիսի 5-ի որոշումն ալեկոծությունների տեղիք էր տվել հայ հասարակության մեջ: Հարկ է մեջբերել նաև Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին՝ ի դեմս Նարիմանովի, Ղարաբաղի ղեկավար աշխատավորների կողմից գրված նամակները: Սակայն

ադրբեջանական իշխանական շրջանակները փորձում էին ցույց տալ, թե իբր հայ աշխատավորության կողմից որևէ դիմադրություն չկար ԱդրԽՍՀ-ի կազմի մեջ մտնելու։ Այսպես, Ն. Նարիմանովին ուղղված մի նամակում, Շուշիի գավառի կառավարիչ Շ. Մահմուդբեկովը գրում է. «Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Ձեզ հավաստիացնում եմ, որ նրա հայ բնակչության կողմից չկա որևէ հակադրություն ԱդրԽՍՀ-ից անջատման, քանի որ նախ նրանք հստակ գիտեն, որ եթե դաշտային մասից անջատվեն, ապա կկործանվեն, և երկրորդ, սովյալ, աղքատ Զանգեզուրից նրանք ոչին ստանալ չեն կարող, և երրորդ, գիտեն, որ ապագայում լինելով Ադրբեջանական ԽՍՀ կազմում, իրենք միշտ կունենան ուժեղ ձայն, պահանջատերի ձայն և կունենան հույս, որ իրենց պահանջները կբավարարվեն, մի բան, որ իրենք չեն ունենա Հայկական ԽՍՀ կազմում»։ Սակայն, անհասկանալի է, թե ինչով է համոզված Մահմուդբեկովը, կատարելով այնպիսի ենթադրություններ, որոնք ապագային են վերաբերում։ Ակնհայտ է, որ վերջինիս գրությունը ընդամենը մի կեղծ շղարշի ներքո արված ենթադրություն է, որով փորձ էր արվում քողարկել հայ բնակչության իրական ցանկությունները։ Այդուհանդերձ, Ադրբեջանի իշխանությունները չէին շտապում ինքնավարության հռչակման գործընթացն իրականություն դարձնել։ Նրանց նպատակն էր երկարաձգել և ի վերջո Լեռնային Ղարաբաղը լուծարել ադրբեջանական մյուս շրջանների կազմում։ Այդ մասին են վկայում հետևյալ փաստերը. ա] Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ 1921թ. դեկտեմբերի 10-ին հրավիրված համագումարում, որոշում կայացվեց, որ «այսպես կոչված որևէ հստակ ղարաբաղյան հարց գոյություն չունի, այն ծագում է թույլ կուսակցական աշխատանքի արդյունքում, կոշտ և հետևողական աշխատանքի բացակայությամբ։ Այդ հարցը կարող է վճռվել ոչ թե բարդ բարեփոխումների, այլ Ղարաբաղում ուժեղացված աշխատանքով»։ [Мелконян А., Хачатрян К., Крючков И., 2023, 348]։ Ադրբեջանցի պատմաբան Սուլեյմանովը գրում է. «Չնայած դրան Մոսկվայի ճնշման և Օրջոնոկիձեի բացառիկ որոշմամբ ՌԿ[բ]Կ Ադրերկրկոմի նախագահության նիստում որոշվեց. «Ի կատարումն Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշման, Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին, ԱԿԿ ԿԿ-ին առաջարկել այդ որոշումն կյանքի կոչել։ Ի հակադրումն այս որոշման, 1921թ. սեպտեմբերի 26-ին ԱԿԿ[բ] ԿԿ-ի Քաղբյուրոն և Կազմբյուրոն ԿԿ-ի քարտուղար Ս. Կիրովի նախագահությամբ ձայների մեծամասնությամբ որոշեց. «Կովբյուրոյին խնդրել վերանայել իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին. մինչ այդ ինքնավարություն չհայտարարել»։ [Сулейманова, 2022, 54]։ Այն, որ ադրբեջանական կողմը դեմ էր ինքնավարությունը կյանքի կոչելուն, երևում է նաև ադրբեջանցի պատմաբան Նիֆտալիեվի հետևյալ տողերում. «… նման արհեստական քաղաքական միավորի ստեղծման համար, ինչպիսինն էր ինքնավարությունը Լեռնային Ղարաբաղի հայերի համար, անհրաժեշտ էր քանդել Ղարաբաղի պատմականորեն ձևավորված քաղաքական, տնտեսական և ազգագրական սահմանները։ Այս ամենը վառ վկայությունն է այն բանի, որ ընդունելով որոշում կոնկրետ ազգային-տարածքային միավորի ստեղծման մասին, բոլշևիկները չունեին հստակ պատկերացումներ և պատրաստի քաղաքական դեղատոմսեր դրանք կյանքի կոչելու համար»։ Նիֆտալիեվը ավելացնում է. «Արդյունքում նոր տարածքային միավորում ձևավորելու համար, ի սկզբանե էլ իրար բախվեցին տարբեր քաղաքական-գաղափարախոսական առաջնահերթություններ, ինչպես նաև տարբեր խմբային հետաքրքրություններ, և այս ամենն ընթանում էր կոնֆլիկտներով…»։ [Нифталиев, 2010, 123]։ Այն, որ իսկապես բարդ

պայմաններում է ընթացել Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ձևավորումը, նշվում է նաև ադրբեջանցի պատմաբանների մոտ: Այսպես, Ի. Ալիեվը գրում է. «պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ձևավորումն ընթացել է բարդ պայմաններում: Դրա դեմ էին հանդես գալիս ազգայնականորեն տրամադրված հայ մտավորականները ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ում» [Алиев, 1989, 101]: Այո, իսկապես Լեռնային Ղարաբաղի հարցն ասես մտել էր փակուղի: 1921-1922թթ. Լեռնային Ղարաբաղում հրավիրված բոլոր հավաքներում, համագումարներում անընդհատ հայությունը բարձրացնում էր մայր Հայաստանի հետ միավորվելու պահանջ: Ադրբեջանի իշխանությունները լավ էին հասկանում, որ Լեռնային Ղարաբաղի 94.6 տոկ. կազմող հայ բնակչության ցանկությունը դա ինքնավարությունը չէր, այլ միավորումը Հայաստանի հետ, որ ինքնավարություն շնորհելով Լեռնային Ղարաբաղի հարցը լուծում չի ստանա և կհանգեցնի նոր խնդիրների, ուստի և ձգտում էին ընդհանրապես հրաժարվել նաև ինքնավարության շնորհման և Լեռնային Ղարաբաղը որպես առանձին ինքնավար միավոր ձևավորելու մտքից և այն տարրալուծել Ադրբեջանի հանրապետության կազմում: Այդ է վկայում այն փաստը, որ 1921թ. սեպտեմբերի 26-ի նիստում ԱԿԿ/բ/ ԿԿ-ի քաղբյուրոն և կազմբյուրոն ԿԿ-ի քարտուղար Ս.Մ. Կիրովի նախագահությամբ որոշում է. «Խնդրել Կովբյուրոյին վերանայել իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին. մինչ այդ ինքնավարություն չհռչակել»: Եվ միայն դրանից հետո է, որ 1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրված Ղարաբաղի պատասխանատու աշխատավորների կոնֆերանսում, որին մասնակցում էին Ա. Կարաեվը, Լ. Միրզոյանը, Դ. Բունիաթզադեն, ընդունեց հետևյալ որոշումը. Ղարաբաղի աշխատավորների կոնֆերանսը աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում: [Աբրահամյան, Գիրք Ա, 2003, 264]: Այն, որ ադրբեջանական կողմը ձգտում էր չեղարկել ինքնավարության շնորհումը և Լեռնային Ղարաբաղի տարածքը լուծարել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, երևում է նաև Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ գյուղի գյուխխորհրդի նախկին նախագահ Սուրեն Միրզաբեկյանցի հուշերում: 1922թ. երկրորդ կեսին, երկրամասի գյուղական և շրջանային խորհուրդների նախագահներին և քարտուղարներին կանչում են Շուշի խորհրդակցության: Հավաքվածների առաջ ելույթ ունենալով՝ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Կարաեվը, փորձում էր համոզել հավաքվածներին, որ Մոսկվայի համար դժվար է ճկուն ղեկավարել իրարից անջատված մարզերն ու գավառները, մանավանդ որ խորհրդային նոր պետության շինարարությունը պահանջում է առանձին դեպքերում կիրառել արտակարգ միջոցառումներ, որը ներկա պայմաններում համարյա անհիրագործելի է: Այնուհետև նա նշում է, որ Մոսկվայից իրեն լիազորել են տեղական խորհրդային իշխանությունների հետ քննարկել հանրապետությունների առանձին շրջանները և մարզերը խոշորացնելու [միավորելու] հարցը՝ ելնելով տնտեսական և ազգային հատկանիշներից: Նա պնդում է, որ Լեռնային Ղարաբաղը պետք է միանա Ադրբեջանին: Որպես հիմք վկայակոչում է Ղարաբաղի տնտեսական կապը Ադրբեջանի հետ, շատ ղարաբաղցիների Բաքվում գտնվելը, Հայաստանի հետ

հաղորդակցության միջոցներից զրկված լինելը և այլն։ Ուստի Կարաեվը պահանջում է համաձայնվել «Լեռնային Ղարաբաղը միավորել Ադրբեջանական ԽՍՀ-ին» [Աբրահամյան, Գիրք Ա, 2003, 266]։ Ասվածը լրիվությամբ ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղը մինչև 1922թ. չէր ընդունում Ադրբեջանի իրեն փաթաթված իշխանությունը։ Կարաեվի ելույթն առաջ բերեց խիստ դժգոհություններ և անհամաձայնություններ։

Ինքնավարությունը՝ որպես ազգային հիմնախնդրի լուծման բանաձև։ բացթողումներ և հետևանքներ

Ինքնավարությունն այն նվազագույնն էր, որ ինչ որ չափով կարող էր փոխհատուցել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու որոշման անհամաձայնությանն ու դժգոհությանը։ Սակայն այդ նվազագույնին իսկ ադրբեջանական իշխանությունները դեմ էին։ Եւ միայն Խորհրդային Հայաստանի և Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերացիայի ղեկավարության ճնշման ներքո, Ադրբեջանը ստիպված էր տեղի տալ։ Այսպես, Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի նիստը 1922թ. հուլիսի 5-ին որոշում է դիմել Անդրերկրկոմին խնդրանքով իրականացնելու Կովբյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին։ [Нагорный Карабах 1918-1923 гг., 1992, 660]։ Ընդառաջելով հայկական կողմին՝ ՌԿ[բ]Կ կենտկոմի Անդրերկրկոմի նախագահությունը 1922թ. հոկտեմբերի 27-ին հանձնարարում է Ադրկոմկուսի կենտկոմին կյանքի կոչել այդ որոշումը։ 1922թ. հոկտեմբերի 30-ին Ադրկոմկուսի նախագահությունը որոշեց հաստատել նոր հանձնաժողովի կազմը Ս. Աղամալիօղլուի նախագահությամբ՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցի մշակման համար։ 1922թ. դեկտեմբերի սկզբին Ղարաբաղի հարցը քննարկվեց ՌԿ[բ]Կ Անդրերկրամասային կոմիտեում։ Վերջինս հաստատեց Ադրբեջանի ժողկոմխորհին կից Կենտրոնական հանձնաժողովի կազմը Լեռնային Ղարաբաղի հարցով 7 հոգուց բաղկացած։ Անդրերկրկոմի որոշումից հետո միայն, Ադրկոմկուսի ԿԿ-ի նախագահությունը, 1922թ. դեկտեմբերի 15-ին հաստատեց Կենտրոնական հանձնաժողովի կազմը Լեռնային Ղարաբաղի հարցով՝ Ադրբեջանական ՍՍՀ Ժողկոմխորհին կից Ս. Մ. Կիրովի նախագահությամբ և Լեռնային Ղարաբաղի հարցով կոմիտեի կազմը Ա. Կարակոզովի նախագահությամբ։ 1922թ. դեկտեմբերի 17-ին հաստատվեց ԱդրԽՍՀ-ի ժողկոմխորհի և կենտրոնական գործադիր կոմիտեի որոշման նախագիծը Լեռնային Ղարաբաղի մասին։ Այդուհանդերձ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակման գործընթացը շարունակում էր ձգձգվել։ Ի վերջո կրկին Անդրերկրկոմի պլենումը 1923թ. հունիսի 27-ին լսելով Ս. Շադունցի և Ա. Կարակոզովի զեկուցումները Լեռնային Ղարաբաղի մասին, պահանջում է մեկ ամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղն անջատել իբրև ինքնավար մարզ։ Ադրբեջանցի պատմաբանները ևս գրում են, որ Լեռնային Ղարաբաղի հարցը իսկապես ձգձգվում էր։ Ջ. Գուլիեվը գրում է. «Հարցն այնքան էլ հեշտ չէր, և ունենալով մի շարք բարդություններ, տևել է մինչև 1923թ. ամառ»։ Ի վերջո 1923թ. հուլիսի 7-ին Ադրբեջանը ընդունեց հռչակագիր Ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի ստեղծման մասին։ [К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, документы материалы, 1989, 149]։ 1936թ. Ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղին վերանվանվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի [ԼՂԻՄ]։ Անվանման փոփոխությունը ցույց է տալիս, որ սկզբնական շրջանում ինքնավարությունը վերաբերում էր ամբողջ Լեռնային Ղարաբաղին, այլ կերպ ասած նշանակում էր՝ աշխարհագրական տարածք

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն կարգավիճակ, ինչն իրականում այդպես չէր: Երկրորդ փոփոխված տարբերակում Нагорно Карабахский автономний область, նշանակում էր, որ ինքնավարությունը տարածվում էր Լեռնային Ղարաբաղ աշխարհագրական տարածքի մի մասի վրա միայն, ինչը ոչ միայն հետնահանջ էր 1921թ. հուլիսի 5-ի որոշումից, այլ նաև չէր բխում հայության շահերից: Այսպիսով Ադրբեջանի ղեկավարությունը ստիպված էր նահանջել և Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն: Նարիմանովն այդ կապակցությամբ գրել է. «Լեռնային Ղարաբաղը Միրզոյանի ջանքերով դարձավ ինքնավար մարզ: Իմ օրոք դա հնարավոր չեղավ և ոչ թե այն պատճառով, որ ես դեմ էի դրան, այլ, որ իրենք հայ գյուղացիներն էին դրան դեմ: Միրզոյանը այդ ընթացքում հայ դաշնակ ուսուցիչների օգնությամբ հող նախապատրաստեց և հարցը տեղափոխեց Անդրերկրկոմ»: [Нариманов, 2002, 79]: Այնուհետև Նարիմանովը գրում է, թե հենց այդ պահից սկսած վատթարացել են հարաբերությունները հայ և ադրբեջանցի գյուղացիների միջև: Սակայն, ևս մեկ անգամ շեշտենք, որ հայությունն ընդհանրապես դեմ էր որևէ կարգավիճակով Ադրբեջանի կազմ ընդգրկվելուն:

Եւ այսպես, 1923թ. հուլիսի 7-ին հռչակվեց Ադրբեջանի կենտկոմի հռչակագիրը՝ Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն շնորհելու մասին: Ինչ տվեց ինքնավարությունը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Նախ այն, որ ինքնավարությունը, որպես ինքնիշխանության թեկուզ ոչ բարձրագույն ձև, ինքնին նպաստեց հայության ինքնադրսևորման և ինքնության պահպանմանը: Ինքնավարությունն այդ տեսակետից, պետք է ասել, որ պահպանեց թե պատմական հիշողությունը, թե մեկ ամբողջություն, մեկ մարմին ինքն իրեն պահպանելու հնարավորությունը: Ինքնավարությունը կարևոր էր 1921թ. հուլիսի 5-ի պատմական որոշման բացասական արձագանքն ինչ որ տեղ փոխհատուցելու տեսանկյունից: Ինքնավարությունն այն կարևորագույն փրկօղակը եղավ, որով Լեռնային Ղարաբաղի հայությունը կարողացավ պահպանել իր հայեցիությունը: Ինքնավարության ձեռքբերումը այն կարևոր հարթակն էր, որը պահպանեց ինքնորոշման ձգտող և դրա համար պայքարի ուղին բռնած հայ բնակչության ինքնակազմակերպման, ինքնակառավարման որոշակի համակարգը, որով կենդանի մնաց նաև ազգային տարրի՝ հայության պատմական հիշողությունը: «Ինչպես վրացական դեպքում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման համար շարժման հիմքում ընկած էր ազգային ինքնագիտակցությունը»: [Витковская Т., Назукина М., 457]: Հենց ինքնավարությունն էր, որ Լեռնային Ղարաբաղի հայությանը պահեց որպես մեկ ամբողջություն և հիմք ծառայեց հետագայում 1988թ. իր ինքնորոշման հարցը բարձրացնելու: Այժմ անդրադառնանք այն խնդիրներին, որոնք սկիզբ առան ինքնավարության պայմաններում:

1. Ինքնավարությանը դեմ էր Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը: Հայ բնակչությունն անարդար էր համարում 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, որով Լեռնային Ղարաբաղն անցավ Ադրբեջանին և բազմիցս պահանջում էր չեղարկել որոշումն ու երկրամասը միացնել Հայկական ԽՍՀ-ին: Ինչպես նշում է Հ. Հարությունյանը 1921թ. ամռանը Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անց չի կացվել և հայ բնակչությունն էլ չի արտահայտվել Ադրբեջանի կազմում մարզային ինքնավարություն ունենալու օգտին: Բացի դրանից հարկ է լուրջ անդրադարձ կատարել նաև Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման

համագումարներին, որոնք տեղի ունեցան ավելի վաղ 1918-1920թթ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայության լիազոր ներկայացուցիչների կողմից հրավիրված համագումարներում, որտեղ հայությունը դեմ է արտահայտվել Ադրբեջանի կազմում, որևէ ձևով լինելու հանգամանքին:

2. Ինքնավարությանն ընդհանրապես դեմ էր Ադրբեջանը: Ինչպես իրավացիորեն նկատում է Սոպարովը, Ադրբեջանը ճիշտ է քաղաքական հաղթանակ տարավ՝ պահելով Ղարաբաղի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը, սակայն այդ հաղթանակի գինը՝ Լեռնային Ղարաբաղի հայերի ինքնավարությունը իշխանություններին թվում էր չափից դուրս շատ: Իսկապես ադրբեջանական կողմը լավ էր հասկանում, որ ինքնավարության ձևավորումը Լեռնային Ղարաբաղում ստեղծելու էր Ղարաբաղի մասնատում, քաղաքական և վարչական մի միավորի ստեղծում՝ միատարր հայ բնակչության մեծամասնությամբ: Դա էր պատճառը, որ ադրբեջանական կողմը հիմնախնդիրը մոռացության մատնելու և ինքնավարության մասին որոշումը չիրագործելու նպատակով որդեգրել էր այն ձգձգելու մարտավարություն: Հատկանշական է ադրբեջանցի պատմաբան Նիֆտալիեվի քննադատական խոսքն ուղղված բոլշևիկյան իշխանություններին, առ այն, որ որոշում ընդունելով այս կամ այն կոնկրետ ազգային-քաղաքական միավորում ստեղծելու մասին, բոլշևիկները չունեին հստակ պատկերացումներ և պատրաստի քաղաքական դեղատոմսեր դրանք իրականություն դարձնելու համար [Нифталиев, 2010, 124] :

3. Դրան հակառակ, ինքնավարությանը Ադրբեջանի կազմում, կողմ էին հայ քաղաքական գործիչները, ովքեր որ լիազորված էին զբաղվելու ղարաբաղյան հիմնախնդրով: Հատկանշական է փաստը, որ ակնհայտորեն ուրվագծվում էր շերտավորում քննարկվող հարցի շուրջ հենց հայկական միջավայրում ևս: Սակայն հարկ է ընդգծել այն կարևորագույն փաստը, որ կոնկրետ ազգային հիմնախնդիրների լուծման նպատակով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը տվյալ պահին գործեց տարածաշրջանում ուժային հավասարակշռությունը պահելու, ազգային հարցը կոմունիստական գաղափարախոսությանը ստորադասելու, ինչպես նաև տարածքային վերաձևումներով և քաղաքական կարգավիճակ շնորհելու ներքո լռեցնելու ռազմավարությամբ: Կարևոր դերակատարություն ունեցավ նաև Խորհրդային Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի Անդրկովկասում ձևավորվող դաշնակցային հարաբերությունների հետևանքները ի օգուտ Ադրբեջանի, և ոչ ի օգուտ հայկական կողմի: Մյուս կողմից Զանգեզուրի պահպանումը Խորհրդային Ռուսաստանի կազմում և Լեռնային Ղարաբաղին ինքնավարության շնորհումը այն հարթակն էր, որով Ռուսաստանը զսպեց անդրկովկասյան տարածաշրջանում Թուրքիայի ծավալման հետագա հնարավորությանը: Լեռնային Ղարաբաղի հարցով հայկական կողմից նշանակված լիազորները բնականաբար Լեռնային Ղարաբաղի հարցում վարում էին բոլշևիկների վարած քաղաքականությունը:

3. Առհասարակ, խորհրդային իշխանության ժամանակներում ձևավորված ինքնավար հանրապետությունների, կամ մարզերի ստեղծման հիմքում ընկած էր ազգային հիմքը: 1920-ական թթ. ձևավորվեցին մի շարք ինքնավար հանրապետություններ և ինքնավար մարզեր: Դրանք հաճախ ստեղծվել էին պահի և հանգամանքների թելադրանքով՝ առանց խոր հաշվարկների: Խորհրդային այդ ինքնավար միավորների ստեղծման իրական հանգամանքների և գաղափարախոսական շարժառիթների անհամապատասխանությունը

վերջիններիս հետագա քաղաքական և վարչական ինքնուրույնության իրացման համար ստեղծում էին լուրջ խնդիրներ: Եւ այսպես ինչ էր իրենից ներկայացնում խորհրդային ինքնավարությունը: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, մի կողմից այդ ինքնավարությունը նշանակում էր մարզերի ու հանրապետությունների որոշակի ինքնուրույնություն, մյուս կողմից էլ ընդգծում էր նրանց կախվածությունը խորհրդային պետական համակարգից: «Նման երկակիությունը թույլ էր տալիս խորհրդային ինքնավարությունը բնութագրել որպես քաղաքական միավորում, կառույց, որի ինքնուրույնության սահմանները կախված էին հիմնականում կենտրոնական իշխանությունից»:

4. Ինքնավարությունը՝ ի հակակշիռ Կովբյուրոյի որոշման, ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի մի մասից միայն: 1921թ. հուլիսի 5-ի որոշման մեջ հստակ ասվում էր. Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ կազմում՝ տալով նրան լայն ինքնավարություն: Այսինքն, ինքնավարությունը պետք է շնորհվեր ողջ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին միայն: Սակայն թողնելով կռվան, հետագայում սեփական ոճով ձևավորելու ինքնավարությունը, նույն որոշման գ կետում ասվում էր, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության ծավալը որոշել Ադրբեջանի ԿԿ-կողմից և ներկայացնել հաստատման Կովբուրոյին (Нагорный Карабах 1918-1923 гг., Сборник документов и материалов, 650): Չէ որ մարզի սկզբնական անվան մեջ ինքնավարություն կարգավիճակը գերակշռություն ունի աշխարհագրական տարածքի վրա: Իսկ ԼՂԻՄ անվանման մեջ ակնհայտորեն երևում է, որ ինքնավարությունը ստորդասվում է աշխարհագրական տարածքինէ ընդգրկելով նրա մի մասը միայն: մի Հենց մարզի սկզբնական անվանումը ասվածի լավագույն ապացույցն է: Սակայն Կովբյուրոյի այս որոշումը, որը չի ընդունվել հայ հասարակության կողմից, իրագործվեց խմբագրումներով և սեփական ընթացակարգով: Խախտելով ՌԿ[բ]Կ Կովբյուրոյի որոշումը՝ Ադրբեջանի Կենտգործկոմը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»: [Փաշայան, «21-րդ դար», 2014, 31]: Ինքնավարությունը շնորհվեց Լեռնային Ղարաբաղի մի մասին միայն: Արդյունքում 12000 հազ. քկմ տարածքից մարզը ստեղծվեց 4,4 հազ. ք կմ տարածքի վրա:

5. Ինքնավարության պայմաններում ԼՂԻՄ-ի հայ բնակչության պատմական ընթացքը խախտվեց ադրբեջանական իշխանությունների կողմից ինքնավարության որոշակի խախտումներով, սկիզբ առան տարածքի զարգացմանը խոչընդոտելուն ուղղված քայլեր, մայր Հայաստանի հետ կապի խզման, ընդհանուր սահման չունենալու քարտեզագրման: Ինքնավարության շնորհմանը զուգահեռ տեղի էր ունենում Լեռնային Ղարաբաղի այսպես կոչված հայկական մասից, կրճատվում էին տարածքներ և այնպիսի սահմանազատում էր կատարվում, որով մարզը լիներ փոքր սահմաններում և Խորհրդային Հայաստանից անջատ: ԼՂԻՄ-ի շուրջ, Ղարաբաղի մյուս տարածքներից ստեղծվեցին Աղդամի, Ջաբրայիլի, Քրդստանի գավառները: Լեռնային Ղարաբաղի հյուսիսային բաղկացուցիչ մասը կազմող հայաբնակ տարածքը նույնպես չընդգրկվեց ինքնավար մարզի մեջ: Այսպիսով, 1921թ. հուլիսի 5-ի որոշման տրամաբանությամբ, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության տարածքը պետք է կազմեր 8000 քառ. կմ: Սակայն, ԼՂԻՄ-ը 1923-1924թթ. կազմավորվեց միայն Լեռնային

Ղարաբաղի մի մասում՝ մոտ 5000 քառ. կմ տարածքով: Ավելին՝ ինքնավար մարզը Լաչինի միջանցքով արհեստականորեն մեկուսացվեց Խորհրդային Հայաստանից: [Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., 2015, 144:] Ի սկզբանե ինքնավարություն կոչվածը հռչակվեց խախտումներով և շարունակական տարածքային կրճատումներով:

6. Արդյունքում Լեռնային Ղարաբաղի հայության մեջ խորհրդային իշխանության տարիներին ժամանակ առ ժամանակ ի հայտ եկան բողոքի, 1921թ. հուլիսի 5-ի որոշումը չեղարկելու, մայր Հայաստանի հետ վերամիավորվելու հստակ պահանջ-բողոքներ ուղղված ԽՍՀՄ կառավարությանը: Հատկանշական է նմանատիպ բողոք դիմումներում անընդհատ շեշտվող պատմական անարդարությունն ուղղելու կոչը: Ընդհանրապես ազգային հարցի լուծման, լռեցման ձևը խորհրդային իշխանությունը փոձեց լուծել վեր ելնելով դրա զուտ ազգային բովանդակությունից և փաթեթավորելով և հրամցնելով նոր գաղափարախոսությամբ՝ ըստ որի ազգային հարցը և դրա համար մղված ազգային պայքարը ստորադասվեց ազգային համերաշխության, սոցիալիստական շինարարության նորահռչակ գաղափարախոսությանը: Փաստորեն տեղի ունեցավ ազգային հարցի՝ սոցիալիստական լայն շինարարության, հայ-ադրբեջանական իբրև թե համերաշխության հաստատման հովանոցով քողարկում, ինչը թերևս տվյալ պահին ԼՂԻՄ-ի հռչակումից հետո ստեղծելով որոշակի լռություն և ներքաղաքական թեկուզև դժգոհ, այնուամենայնիվ որոշակի համաձայնություն, իրականում մնաց չլուծված և ժամանակ առ ժամանակ պոռթկաց բողոքի ու դժգոհության ցնցումներով: Իսկ 1988թ. Լեռնային Ղարաբաղի կարծես թե անթեղված հարցը կրկին վեր բարձրացվեց, 1991թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղը հռչակեց իր անկախությունը, որը սակայն այդպես էլ չընդունվեց ու չճանաչվեց:

Դեռևս թարմ հետքերով տեղի ունեցածը ոչ համարժեք գնահատական ստացավ: Գուցե ոչ մեկ չէր էլ պատկերացնում, որ ինքնավարության շնորհումը և ԼՂԻՄ-ի ձևավորումը տարիներ անց կբերեն և կստեղծեն նոր խնդիրներ, որոնք կվերածվեն տարածաշրջանի ամենաբարդ խնդիրներից մեկը, ինչն իր հերթին հանգեցրեց բազմաթիվ արյունահեղությունների և ի վերջո Լեռնային Ղարաբաղի հայաթափման: Եւ պատմությունը ապացուցեց, որ սխալ էր ԱԿԿ/բ/-ի առաջին քարտուղար Ս. Մ. Կիրովի կանխատեսումը, 1924թ. Կուսակցության 6-րդ համագումարում արված, որտեղ վերջինս ասել էր. «Այդ հարցը մենք վերջնականապես որոշել ենք և անկասկած արել ենք լրիվությամբ ճիշտ գործ: Ոչ մեկ կասկածի տակ չի առնում, որ վերաորոշել այդ հարցը կարիք չի լինելու... »: [Алиев, 1989, 104]:

Եզրակացություն: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի առանձնացումը որպես առանձին վարչական միավոր, տեղի ունեցավ բարդ պայմաններում, ձգձգվեց երկար և ի վերջո իրականություն դարձավ 1923թ. հուլիսի 7-ին: Թվում էր, լուծվեց ազգամիջյան մի կնճռոտ խնդիր, որի սկիզբը դրվեց 1918-ին, երբ Այսրկովկասում ստեղծվեցին ազգային պետականություններ: Ազգային պետություն-տարածքային համապատասխանության խնդիրները դաձան բախումների ու չդադարող հակամարտությունների պատճառ: Բոլշևիկները գալով իշխանության գլուխ ազգային հարցերի լուծման տարբերակներից մեկն էլ դիտարկեցին տնտեսական և սոցիալիստական շինարարության խաղաղ գործընթացում հակամարտող ազգերի ներգրավումը: Ինչպես իրավացիորեն նկատում է Շուվալովը, բոլշևիկյան ղեկավարությանը, այս հարցի շուրջ չուներ մանրակրկիտ մշակված պլան: Բոլշևիկյան

իշխանությունը գործեց ինքնաբուխ, ղեկավարվեց կոնֆլիկտը արագ լուծելու սկզբունքով հնարավորինս ստեղծելով հակամարտող կողմերի՝ տվյալ դեպքում անդրկովկասյան երկու հանրապետությունների ազգային շահերի համաձայնեցում: Բնական է, որ ինքնավարության հռչակումը Լեռնային Ղարաբաղում [փոխհամաձայնեցված] կոմպրոմիսային էր տվյալ պահին, այն հիմնախնդրի լուծում չէր՝ հեռահար ու երկարաժամկետ կտրվածքով: Լեռնային Ղարաբաղի հարցը վճռվեց՝ տարածքը Ադրբեջանի կազմ ընդգրկելով հօգուտ Ադրբեջանի և ինքնավարություն տրամադրելով հօգուտ հայկական կողմի: Թե որքանով այն բավարարեց հակամարտող կողմերի իրական սպասումները, ցույց տվեց ժամանակը: Հարկ է ընդգծել, որ ինքնավարությունը լիարժեք չլուծեց արցախահայության ազգային ինքնադրսևորման պահանջմունքը, և հետագայում արդյունքը եղավ հարցի հետագա սրացումներն ու հայ ժողովրդի բուռն պոռթկմանը 1988թ.: Ընդհանրապես ինքնավարությունը որպես քաղաքական կարգավիճակ՝ դա տարածքային ինքնակառավարման և ինքնորոշման ձև է: Ինչպես նշում է Պ. Ուլյանիշեվը, ինքնավարությունն դա ազգային և տարածքային հանրույթի ինքնորոշման ձևերից մեկն է մեկ միասնական պետության սահմաններում: Այդ կոնտեքստում, ինչպես նշում է վերջինս, դա նշանակում է ազգի ինքնակառավարում խիտ բնակությամբ իր բնիկ տարածքում: [Ульянищев, 27]: Հեղինակը իրավացիորեն համարում է, որ անկախ ինքնավարության բնույթից՝ սկզբնապատճառը նման ինքնավարության, համարվում է տվյալ տարածքում խիտ բնակեցված բնակչության ազգային ինքնագիտակցության հարցը: Հեղինակը գտնում է, որ «անհեռատես կհամարվի այն պետության քաղաքականությունը, որը իր սահմաններում ապրող առանձին ժողովուրդներին կզրկի հնարավորությունից, ապրելու դարերով ձևավորված կարգերով և պահպանելու իր մշակութային ինքնավարությունը [նույնիսկ եթե իր կարգերն ու մշակույթն առավել առաջիմական և քաղաքակիրթ համարեր] և նրան հնարավորություն չտար ինքնուրույն տնօրինելու այն տարածքը, որտեղ տվյալ ժողովուրդն ընդգրկված է» [Ульянищев, 28]: Պետք է հաշվի առնել մի կարևոր հանգամանք եւս. 1923թ. Լեռնային Ղարաբաղին տրված ինքնավարությունը լիարժեք չէր կարող լինել, հենց նաև այն պատճառով, որ ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը ինքնին սահմանափակում էր նախկին ռուսական կայսրության տարածքում ստեղծված ազգային պետությունների ինքնավարությունը: Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, որոնք խորհրդայնացման ընթացքում դե յուրե անկախ հանրապետություններ էին, 1922թ. վերջին, ընդգրկվեցին մեկ միասնական պետության՝ ԽՍՀՄ կազմ, այն էլ ոչ թե կենտրոնին ուղղակի ենթակայության կարգավիճակով, այլ դաշնային պետական միավորման՝ Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով: Բնական է, որ նման պայմաններում խոսել իրական ինքնավարության մասին, ուղղակի անհեթեթություն կլիներ: Այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ում ընդգրկված հանրապետություններն իսկ լիարժեք ինքնավար չէին, դրանցում ձևավորված մարզերի ինքնավարությունն առավել քան լիարժեք չէր: Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակման գործընթացն ի սկզբանե, ընթացավ խախտումներով, կայացվեց նախնական որոշմանը ոչ համապատասխան և հարկ է ընդգծել նաև, որ ինքնավարության ողջ ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ տեղ գտան հակահայկական դրսևորումներ: Ադր. ԽՍՀ ղեկավարությունը փաստորեն որդեգրեց

ԼՂԻՄ-ի որպես ազգային ինքնավար պետական միավորման ինքնուրույնությունը սահմանափակելու քաղաքականություն: Անընդհատ միջամտելու և հայկականության ինքնությանը խոչընդոտելու որդեգրած գծի մասին է փաստում ԼՂԻՄ գոյության ողջ ընթացքում մարզի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացում տեղի ունեցած փոփոխությունները: Բավական է հիշատակել միայն, որ 1923-1989թթ. ԼՂԻՄ հայ բնակչության թիվը 66 տարվա ընթացքում [1923-1989թթ.] 149,6 հազարից «հասել» է 145,5 հազարի, այն դեպքում, երբ ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում 7,7 հազարից հասել է 40,6 հազարի: Մարզում վարվող տնտեսական քաղաքականությունն այնպիսինն էր, որ խորհրդային իշխանության ողջ ընթացքում, այն ձևավորվեց որպես հումքային կցորդ, երբևիցե և որևէ ոլորտում անհնարին դարձնելով ինքնաբավությունը: Հենց այդ քաղաքականությունն է, որ խորհրդային ժամանակաշրջանում նույնիսկ, Լեռնային Ղարաբաղի հայության կողմից բազմաթիվ դիմումներ հղվեցին ԽՍՀՄ ղեկավարության հասցեով՝ ուղղելու պատմական սխալը և մարզը միացնելու Հայկական ԽՍՀ-ին: 1988թ. պայքարը մտավ նոր փուլ: Արցախահայությունը իրացնելով իր ինքնորոշման իրավունքը, 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց անկախություն, անցավ երեք պատերազմների միջով և 2023թ. տեղահանվեց իր պատմական հայրենիքից: 1921թ. հուլիսի 5-ի որոշումը խախտումներով կյանքի կոչելը, ինքնավարության պարբերաբար սահմանափակումները, ազգային ինքնության ոտնահարումները եղան այն խթանիչները, որոնք դարձան Լեռնային Ղարաբաղի երկարատև ու արյունահեղ հակամարտության ծավալման պատճառներ:

Գրականության ցանկ

Abrahamyan H., 2003, Martnch'vogh Arts'akhy 1917-2000, girk' A, 1917-1923, Yerevan, ej 338.

LGHIM marzayin petakan arkhiv, Fond 485, ts'ank 1, glukh 14, t'ert' 66-68.

LGHIM marzayin petakan arkhiv, Fond 485, ts'ank 1, glukh 14, t'ert' 66-68.

HH PPKA, f. 200, ts'. 1, g. 581, t'. 98:

Harut'yunyan H., 1996, Lerrnayin Gharabaghy 1918-1921t't'., Yerevan, 299 ej.

Khach'atryan K., Suk'iasyan H., Badalyan G., 2015, Khorhrdayin Hayastani yev LGHIM-i taratsk'ayin korustnery 1920-1930-akan t't'., Yerevan, ej 160.

P'ashayan H., 2014, Gharabaghyan himnakhndri k'aghak'akan p'astarknery LGHIM kazmavorman yev Adr. KHSH kazmits' durs berman p'astat'gherum[1923-1989t't'.], «21-rd DAR», t'iv 4 [56], ej 28-50.

Azerbaydzhanskaya argumentatsiya i yeye oproverzheniye, Yerevan, 1989.

Aliyev I., 1989, Nagornyy Karabakh: Istoriya. Fakty. Sobytiya, Baku, s. 104.

Vitkovskaya T., Nazukina M., Dinamika samoopredeleniya etnicheskikh dvizheniy na postsovetskom prostranstve [na primere Azerbaydzhana i Gruzii], Ars Administrandi [Iskusstvo upravleniya]. 2023. T. 15, № 3, 447–470.

Suleymanova S., Istoriya obrazovaniya Nagorno-Karabakhskoy avtonomnoy oblasti po arkhivnym dokumentam, Sciences of Europe 94, 2022, s. 52-56.

K istorii obrazovaniya Nagorno-Karabakhskoy avtonomnoy oblasti Azerbaydzhanskoy SSR. Dokumenty i materialy, 1989, s. 270

Konflikt v Nagornom Karabakhe, sbornik statey, Baku, 1990, s. 272

Melkonyan A., Khachatryan K., Kryuchkov I., Problemy sovetskogo natsional'no-gosudarstvennogo stroitel'stva/ istoriko-kriticheskiy analiz na primere SuArmenii/, Oriental studies, 2023. Vol.16 is 2.

Nagornyy Karabakh 1918-1923 gg., 1992, Sbornik dokumentov i materialov, Yerevan, s. 650.

Nagornyy Karabakh v mezhdunarodnom prave i mirovoy politike. Dokumenty i kommentariy, 2008, tom 1, /sost. Otv. Red. Vstup. St. i komment. d. yu. n., prof. YU. G. Barsegov/, s. 944.

Narimanov N., 2002, Pis'ma i nekotoryye dokumenty po karabakhskomu voprosu, Baku, 120.

Niftaliyev I., 2010, Azerbaydzhanskaya SSR v ekspansionistskikh planakh armyan [20-ye gody KHKH veka], Baku, s. 292.

Ul'yanishchev P., 2008, Avtonomiya kak forma territorial'nogo samoupravleniya Vestnik RUDN, №2, 28-35.